ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի պարոն մարզպետ

Զեկուցում եմ առ այն, որ ի կատարումն Ձեր հանձնարարականի ս/թ հուլիսի 11-15-ը ապահովվել է ՀՀ Արմավիրի մարզի Արազափ, Ապագա, Աղավնատուն, Հուշակերտ և Այգեվան գյուղական համայնքներում համայնքի ղեկավարի 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացը:

Վերոգրյալի հիման վրա կից ներկայացվում է նշված համայնքների ղեկավարների հաշվետվությունները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

18.07.2016թ.

ՀՀ Արմավիրի մարզի Արազապ

համայնքի ղեկավար Մ. Հարությունյան

2016թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

ղեկավարի տեղակալ Ա. Հովհաննիսյանի, համայնքի ավագանու և համայնքի 65 բնակիչների.

11.06.2016թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազապ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2016թ.համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՄՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման աշխատանքների:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Մեխանիզացիայի պակասությունը

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 63.8տոննա ազոտական սիլիտրա և 7324լիտր դիզելային վառելանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարաքային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի ծառայության օբյեկտ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերք օգտագործման վրա:
Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
2015թվականի ապրիլ ամսին համայնքի բյուջեով և Վիվասել ՍՏՍ-ի ինչպես նաև Ամերիկյան միջազգային կազմակերպության աջակցությամբ համայնքում շահագործման հանձնվեց խմելաջրի նոր ցանցը՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ:
Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Սիստեմատիկաբար, ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեից 480.0հազար դրամ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:
Աշակերտների թիվը 236
Աշխատողների թիվը 41-ը, որից՝ ուսուցիչներ՝ 33:
Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նախակրթարանի 2 խմբերի համար համայնքի բյուջեից 2750.0հազ. դրամ սուբսիդիա է հատկացվել խմբերի գործունեության պահպանման վրա:
Նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, մայիսի 28-ի, վերջին զանգի, միջոցառումների կապակցությամբ ծախսվել է 800.0հազար դրամ:
Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:
Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել հայրենական մեծ պատերազմում և արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանին:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը: միջդպրոցական մրցույթներում Արազափի դպրոցի սաները գրավեցին 1-ին տեղը: Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Աջակցում է սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարաքային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:
Համայնքում գործում է «Խնամակալության և հոգեբարձության», հանձնաժող, որի հիմնական խնդիրը բափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիրակումն է:Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան: Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվել է ֆինանսական օգնություն: 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի 25 սոցիալապես անապահով ընտանիքների, տրվել է դրամական օգնություն 590.0 հազար դրամ:
Համայնքում հաշվառված են 149թոշակառուներ այդ թվում 129 ծերության և աշխատանքային, 2-ը կերակրողը կորցնողի, 18-ը հաշվանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 23:
Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչիկների նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:
Համայնքի տնտեսությունների թիվը 350, բնակչության թիվը 1830 մարդ գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1050 մարդ:
2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել են 7 երեխա, մահացածների թիվը՝ 5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2016թ. 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

N	անվանումը	տարեկան պլան	2016թ. 1-ին կիսամյակ		կատարողական %	
			պլան	փաստացի	1-ին կիսամյակ	տարեկան
1	հողի հարկ	6560.0	3266.3	551.0	16.8%	8.3%
2	գույքահարկ	2444.7	1220.0	544.2	44.6%	22.2%
3	տեղական տուրքեր	164.0	80.0	63.6	79.5%	38.7%
4	ոչ հարկային եկամուտներ	1789.0	894.0	697.0	77.9%	38.9%
5	պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա	28436.3	14260.5	14254.0	99.9%	50%
	ընդամենը վարչական բյուջե	39394.0	19720.8	16109.8	81.6%	40.8%
6	հողի օտարումից մուտքեր	—	—	—	—	—
7	տարեսկզբի ազատ մնացորդ	7649.1	7649.1	7649.1	----	-----
	Ընդամենը	47043.1	27369.9	23758.9	86.8%	50.5%

Բերված աղյուսակից երևում է, որ համայնքի վարչական բյուջի եկամուտների վարչական բյուջեի գծով ընդամենը 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտների 81.6%, ընդամենը եկամուտները86.8%.
2016թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

N	ծախսերի անվանումը	2016թ. 1-ին կիսամյակ		կատարողական %
		պլան	փաստացի	
1	տեղական ինքնակառավարում	10300.0	8737.6	84.8%
2	Համայնք. այլ ծառ.	1173.2	362.6	30.9%
3	աղբահանություն	480.0	400.0	83.3%
4	մշակույթ սպորտ և ռադ.հեռ.հաղ.	1392.3	800.0	57.4%
5	ճանապարհների վերանորոգում	—	—	—
6	կրթություն	2750.0	2750.0	100%
7	ջրամատակարարում	1053.0	538.9	51.1%
8	Սոց. օգնություն	1200.0	590.0	49.1%

9	արտաքին լուսավորում	-	—	—
10	պահուստային ֆոնդ	1372.3	—	—
11	ֆոնդային բյուջե	7649.1	-	-
	Ընդամենը	27369.9	14179.1	51.8%

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Արազափի համայնքապետարանում 2016թ.1-ին կիսամյակի ընթացքում ստացվել է 41դիմում:
Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:
Ընթացիք ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել են 80 գրություն, հղվել է 83 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է 120 տեղեկանքներ: Արձակվել է համայնքի ղեկավարի 20 կարգադրություն և ընդունվել է համայնքի ղեկավարի 17 որոշում:
2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 9 մարդ, որից 5-ը համայնքային ծառայողներ:
2016թ. 1-ին կիսամյակի դրությամբ աշխատավարձի և սոց վճարումների պարտքեր չկան:
2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 4 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մշակույթի տան հիմնավերանորոգում
2. Մանկապարտեզի ջեռուցումը
3. Գյուղտեխնիկայի ձեռք բերում (գյուղգործիքներ):
4. Դպրոցի վերանորոգումը ավարտին հասցնելու հարցը

ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

Արազափ համայնքի
ընդհանուր ժողով

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՍԱՐԶՊԵՏ

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմել Ձեզ՝

1. Մշակույթի տան հիմնավերանորոգման հարցը ընդգրկել պետական կամ որևիցէ այլ ծրագրում :
2.մեկ խորքային հորերի վերաբացում՝որով կլուծվի 75հա հողատարածքի հարց:

3.Գյուղտեխնիկայի ձեռք բերում (գյուղգործիքներ):

4.Դպրոցի վերանորոգումը ավարտին հասցնելու հարցը:

Խնդրվում է Ձեր միջնորդությունը առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

ԱՐԱԶԱՓ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝/ /Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ